

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐՈՍ

Տարեկան 12 Ֆր.

Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՆՈՒՄ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԻՏԻԿ

Ծանոցման օդը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՅԷ

Rédaction du journal

„Iraounk“

VARNA (Bulgare)

Редакция

НА ВѢСТНИКЪ

Иравуни

ВАРНА

Գրոշքոշիւնք եւս չեն
տրոշիր

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԴԵՂԻՆ ՎՏԱՆԳԸ

Մարդկային զոհերու տեսակէ-
տով իր նախընթացը չունեցող
աղէտաւոր պատերազմը վեր-
ջացաւ : Բորթսմուտ համախմբ-
ուած ռուս և ճարձն պատուիրակ-
ները խաղաղութեան դաշնա-
գիրը ստորագրելէ յետոյ այսօր
հեռացած պիտի ըլլան այդ ա-
մերիկեան քաղաքէն :

Խաղաղութեան կնքման համար
ճարձնի առաջարկած 12 պայ-
մաններէն նուազ կարեւորներու
մասին աւելի առաջ համաձայ-
նութիւն գոյացած ըլլալով
մնացած չորս գլխաւոր պայման-
ները պահ մը խաղաղութիւնը
անկարելիութեան մատնելու եր-
կիւղը տուած էին : Այդ գլխա-
ւոր պայմանները հետեւեալներն
են .

- 1) Սախալին կղզին ճարձնի
թողուլ :
 - 2) ճարձնի պատերազմական
ծախքը վճարել :
 - 3) Օտար նաւահանգիստներ ա-
պաստանած ռուսական նաւերը
ճարձնի յանձնել :
 - 4) Ծայր. Արեւելքի մէջ Ռու-
սիոյ ծովային ուժը սահմանա-
փակել :
- Այս պայմանները իրօք Ռուսիոյ
խիստ նուաստացուցիչ էին, բայց
ճարձնն ալ իր տարած ծովա-
յին և ցամաքային փառաւոր
յաղթանակներով, իրաւունք ու-
նէր այդ պահանջները ընե-
լու : մանաւանդ վերջի պայմանը,
Ռուսիոյ ուժին Ծայր. Արեւելքի
մէջ սահմանափակումը, որ մի-
այն կապահովէր ճարձնը ապա-
գայ ոտնձգութեան հաւանա-
կանութեան դէմ : Երբէք չէր
պատուէր որ Վեհափառ Միքա-
այի պատուիրակները հրաժա-
րէին այս էական պայմանէն,
և յանկարծ ցոյց տրուած զիջու-
մը նոյն իսկ ռուսները զարմա-
ցուց : Մինչ մարաշխտ Օսա-
ման Մանշուրիայէ իր վեհապե-

տին կը հեռագրէր թէ ճարձնա-
կան բանակները անհամբեր կը
սպասեն որ ընդհանուր յարձակ-
մամբ մը թշնամիին վճռական
հարուածը տան ու ջախջա-
խեն, անդին նոյն վեհապե-
տը Բորթսմուտ իր պատուիրակ-
ներուն հրահանգ կուտայ որ հը-
րաժարին այդ էական պայման-
ներէն : Ի՞նչ էր այս յանկար-
ծական փոփոխութեան գաղտ-
նիքը :

Կարծիքներ կան թէ ճարձն
զրամապէս նեղ դրութեան մը
մատնուած ըլլալով չէր կարող
պատերազմը աւելի երկարել :
Այս կարծիքը ուղիղ ըլլալու չէ,
քանի որ փոխառութեան համար
ճարձնի դիմումները միշտ յա-
ջողութեամբ պատկուած էին և եր-
բէք չէին մերժուած, մինչդեռ
Ռուսիա սկիզբէն մերժման հան-
դիպեցաւ նոյնիսկ իր զինակից
Ֆրանսայէն :

Սա կարծիքը աւելի հաւանա-
կան կը թուի մեզ թէ, Մ. Նա-
հանգաց նախագահը Մ. Ռոզվելթ
համաձայնութեամբ ֆրանսա-
յի և Գերմանիոյ, սպառնացած
ըլլայ Միքայայի թէ՛ եթէ որոշ
զիջումներ չընէ իրենք գէժ պի-
տի գտնուին ճարձնի : Պետու-
թեանց մէջ այս կարգի համա-
ձայնութեան մը առիթ տուող
պատճառը ակներեւ է, Դեղին
Վտանգը : Միայն 35-40 տար-
ուան մէջ այդ աստիճան հիանա-
լի զարգացում և ուժի հանգէս
բերող Դեղին ցեղի այդ փոքր
զանգուածը կրնար նոյնչափ
ժամանակամիջոցի մը մէջ իր
ցեղակիցները՝ որոնք շուրջ 500
միլիոն կը հաշուին, պատրաս-
տել ու զինել և օրին մէկը վա-
նել քրիստոնեայ պետութիւննե-
րը Ծայր. Արեւելքի եզերքներէն
ու ջուրերէն : Եւս Դեղին Վտան-
գը : Այս սարսաղեղեցիկ հեռա-
պատկերը ասորիներ առաջ նախ
Գերմանիոյ կայսրը նշմարած էր,
Ռուս-ճարձնական պատերազմը
այդ Վտանգին իրական մանրա-
նկարը պատկերացուց եւ Շուշի-
մայի նեղուցին մէջ ծովակալ
Թօկոյի տարած փառաւոր յաղ-

թանակին վրայ՝ որ իր տեսա-
կին մէջ միակն էր, Մ. Ռոզվելթ-
թըն էր որ հիասթափումի առա-
ջին ճիշդ արձակեց թէ պէտք է
Ամերիկան իր ծովային ուժերը
կրկնապատկէ :

Ինչպէս ցամաքին նոյնչափ
և ալ աւելի ծովի վրայ մար-
տական հիանալի ուժ ցոյց տու-
ող Դեղին ցեղը ուրիշ պետու-
թիւններէ աւելի Ամերիկայի
սպառնալիք մըն էր, և հետեա-
բար Մ. Ռոզվելթ պարտաւոր էր որ
է՛ն առաջ ինք ըմբռնէր սպառ-
նացող վտանգին ծանրութիւնը
և փութար անոր առջեւ առ-
նել կարելի եղած միջոցներով :
Ահա այս մտահոգութիւնը, կը
կարծենք թէ, մղեց Մ. Ռոզվելթը
որ խաղաղութեան միջնորդի դի-
մակին տակ բերէ ճարձնը դը-
նելու նեղ դրութեան մը մէջ
և ոտիպելու զանի որ չը կարենայ
իր յաղթութիւններուն պտուղ-
ները լիովին վայելել :

Կը կարծենք նաեւ թէ ճա-
րձնին կնքել ստիպուած խա-
ղաղութեան այս դաշնագրին
պիտի յաջորդեն ուրիշ դաշնա-
գիրներ ալ, որոնք մէկ ու կէս
տարւոյ պատերազմական տա-
գանքով յոգնած ու պարտա-
սած ճարձնին ոտքերը կապեն
ու կաշկանդեն ի նպաստ ամե-
րիկեան եւ եւրոպական պե-
տութեանց :

Զինաստան՝ այժմ իր ցեղակից
ճարձնի յաղթանակներէն քաջա-
լերեալ սկսած է զինուորական
վերակազմութեան չինք կար-
ծեր որ նա ալ բոլորովին ազատ
ձգուի իր ուղած կամ ճարձնի
թելադրած ձեւերով պատրաս-
տուելու :

ԶՄԻՐՈՒՆԻՈՅ

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Զմիռնիայէն հետեւեալը կը
գրեն Երուսաղէմ քաղաքէն ի
հայկական հսկայ գաւաղրու-

թեան մասին, զոր թուրք կա-
ռավարութիւնը կը գտնէ պա-
րագայից բերմամբ :

Զորեղարթի 9 օգոստոս. — Պ. Փա-
փագան թրքապատակ հայ մը,
որ երկար տարիներէ ի վեր Զմիռ-
նիոյ Քոնստէնտինէի մէջ պաշտոն-
եայ է, կը ձեռքաւորուի իւր 17 տա-
րեկան որդւոյն հետ : Պ. Փափագ-
ան հանդարտարարոյ քառասուն
տարու մօտ մարդ մէ : Պէտք է գիտ-
նալ թէ անոր ձեռքաւորութիւնը
կատարուեցաւ գաղտնի կերպով եւ
գրեթէ ոչ ոք իմացաւ :

Թալոք հինգշաբթի օրը դաւը կամ
կարծեցեալ դաւը պատահմամբ ե-
րեւան հանուած էր : Դուրը երեւան
եւաւ շաքաթ առտուն եւ իսկոյն
տարածուեցաւ կայծակի արագու-
թեամբ, առաջ բերելով յուզում մը որ
հետզհետէ կածէր ի տես խուժը խուժ
ձեռքաւորութեանց եւ կամայական
միջոցներ ձեռք առնուելուն :

Ահաւասիկ ինչ որ անցած զար-
ձած էր : Պատահական զէպքը, որ
դաւը երեւան հանեց, տեղի ունե-
ցաւ կէս օրէն ետքը ժամը 3-ին,
փոքրիկ տան մը մէջ որ կը գտնուի
հայոց թաղին ետեւը Թապալանէ կոչ-
ուած յունաց թաղին մէջ : Այս տու-
նը, որ թրքապատակ եւ ֆրանսա-
կան հիւպատոսարանին երկրորդ
թարգման Պ. Սիմօնեանի կը պատկա-
նի, ժամանակէ մը ի վեր մասամբ
վարձու տրուած էր երկու հայերու :
Կէս օրէն յետոյ ժամը 3-ի միջոցին,
անիւ մէջէն ատրճանակի մը կամ
վեցհարուածեանի մը պայթիւնը լը-
սուեցաւ, որ զարմանք պատճառեց
զիմացը գտնուող փոքրիկ սրճարա-
նի յաճախորդներուն եւ գրացիներ-
ուն : Դուրը կը բացուի եւ մարդ մը
որ ուսէն վիրաւորուած կը թո-
ւէր — ըստ ոմանց թէ բազուկէն եւ
փորէն — դուրս ելաւ եւ ջանաց վա-
զել : Որովհետեւ կաճապարէր, այս
մարդը իր յուզման մէջ յայտարա-
րեց թէ զիպուածով վիրաւորած է
ինքզինքը, աւելցնելով թէ իր ընկե-
րը, որ իր եղբայրն է, իր վիրաւորուե-
լուն մէջ մօտ չունի : Ոստիկանու-
թիւնը վրայ հասնելով տուն մտաւ
մի քանի անձանց հետ : Երկրորդ
հայը անյայտացած էր տանը միւս
դուռէն : Վիրաւորեալն ալ այս պա-
հուն անյայտ եղած էր, երկուքն ոչ
մէկը կարելի չեղան գտնել : Տուրը
ոստիկանութեան կողմէն հսկողու-
թեան տակ առնուեցաւ : Օրինական
խուզարկութիւնը տեղի ունեցաւ ի
ներկայութեան Սայիտ պէյի որ կու-
սակալ Բհամիլ փաշային որդին է
(Զմիռնիոյ կուսակալը իրապէս Սա-

յիտ պէջն է) : Այս խուզարկութեան հետեւանքով խուժար խուժար ձերբաւարութիւններն սկսան հայոց թաղին մէջ : Այժմ 300 հոգիէն աւելի բանտարկուած կան : Մանկոցն եւ Զմիւռնիոյ շրջակայ գիւղերուն մէջ բազմաթիւ ձերբաւարութիւններ եղած են :

Ոստիկանութիւնը անընդհաւ կը հսկէ այն բոլոր կայարաններուն եւ նաւատարաններուն որոնք կը տանին Բորտէլի, Պուճապ, Պուճապաթ եւ շրջակայ գիւղերը :

Ոչ ոք չի կրնար արուարձաններէ կառախուժաւ նստիլ առանց հիւպատուսարանի կողմէն իր իսկութիւնը հաստատող վկայագիր կամ արտօնագիր մը ունենալու :

Բոլոր հայերուն արգելուած է արտասահման մեկնելու անցագիր տալու : Գնաժող գրեականները արտակարգ գործունէութեան մէջ են . ընթացիկ բոլոր գործերը կանգ առած են :

Հայկական թաղերուն մէջ սարսափը կը տիրէ . (Իգմիրի մէջ շուրջ 30000 հայեր կան) : Ոստիկանութիւնը ամէն տուն կը մտնէ, գրաւելով բոլոր թուղթերը, առանց մոռնալու դրամները ու գոհարեղէնները :

Ահաւասիկ եղելութիւնները իրենց նոյնութեամբ :

Այս տակնուվրայութեան պատճառը : Տապալանէի փոքրիկ տան մը մէջ սոսկալի դաւադրութեան մը երեւան հանուելն է : Բնական է որ պաշտօնապէս բան չի հաղորդուիր . եւ բոլոր պաշտօնէութիւնը լուռ կը մնայ, բայց կէս պաշտօնական տեղեկութիւն մը հաղորդուած է Գոնաքէն բոլոր հիւպատոսներուն :

Այս կէս պաշտօնական տեղեկութեանց նայելով բոլոր հիւպատոսարանները իրենց տեղեկագիրները պատրաստեցին : Եւ կրնամ հաղորդել այդ կէս պաշտօնական տեղեկութիւնը, քանի որ ես անձամբ տեսած եմ ամենակարեւոր հիւպատոսարաններէն միոյն տեղեկագիրը : Ահաւասիկ թէ ինչ կըսէ Գոնաքը : «Մատ ամբաներէ ի վեր գիտէինք թէ անիշխանական դաւադրութիւն կը սարքուէր Զմիւռնիոյ մէջ :

«Շուրջ երեք ամիս առաջ մեր լաւագոյն ոստիկաններէն երկուքը բռնեցին քարափի սրճարաններէն միոյն մէջ յոյժ կասկածելի երկու ուսահայեր, որոնք կը կարգային նամակ մը, զոր իսկոյն պատուեցին հետապնդուելու եւ ձերբաւարուելու վախէն : Այս նամակին մի քանի կըտորներէն հասկցանք որ յեղափոխական դոմիթի մը գրութիւն էր այն, եւ թէ դաւադրութիւն մը կը պատրաստուէր : Լուրջ հակողութիւն մը ի գործ դրուելով, այս դաւադրութեան քանի մը թելերը ձեռք անցուցած էինք արդէն, երբ ատուրճանակին պայթման պատահարը թոյլ տուաւ մեզի ահաւելի իրողութեան իրազէի ըլլալ :

«Հարեւր քսան ուսմեր գտնուեցան Տապալանէի փոքրիկ տան մէջ, որոնց ութսունին մեծութիւնը միջակ էր, եւ քառասունները պատի ժամացոյցի չափ, ամենն ալ մէկ մէկ դժոխային մեքենաներ : Մենք բռնեցինք նաեւ գործադրութեան մանրամասնութիւններ պարունակող թուղթեր : Սուրբանի տունն օրը [1 սեպտ.] ոչ սակաւ դժոխային մեքենաներ պիտի զետեղուէին քաղաքին այլ եւ այլ տեղերուն մէջ (բոլորը ցոյց տրուած են Զմիւռնիոյ յատակագիծին մէջ, որ նոյնպէս բռնուած է, Գոնաքի Լիօնէի

Օսմանեան Պանդան, Բրամէր գարեջրատունը, Սորթինի քիւլալ, Գիւլալ տը Շասէյը եւն) : Այս տարբեր պայթուցիկները ակնհիշ կերպով ահագին զարհուրանք մը յառաջ պիտի բերէին, եւ բոլոր ոստիկանութիւնն ու պահպան զօրքը պիտի պարպէր վերին քաղաքը ուր թուրքերը կը բնակին եւ ուր կը գտնուէր Գոնաքը զանոնք քարափներուն վրայ կրելու համար եւ կեդրոնի թաղերը փոխադրելու համար : Դաւադրութիւնը այն ատեն օգուտ պիտի քաղէին այս ընդհանուր խառնաշփոթութիւնէն Գոնաքը օդը հանելու եւ վառելու համար :

«Բրէտի Լիօնէի Փափագեանի ազգական մասիւսաւ մը ձերբաւարեցինք, որ դեռ նոր հաստատուած էր քարափներուն վրայ : Այս մարդը որ օրը կէս քիլօ միս չէր ծախեր 1200 օսմ. լիրա [27600 ֆրանք] առեր է Բրէտի Լիօնէին եւ 80 լիրայի վարձեր է իւր խանութը որ 50 ալ չի չարժեր : Մենք բռնած ենք նոյնպէս դերձակ մը որ դեռ նոր հաստատուած էր փոքրիկ տեղ մը, Օսմանեան դրամատան անցքին մէջ : Այս մարդուն տեղը խուզարկութիւն եղած առանձն, վաճառատան քարէ սալայատակները վերցնելով գոնաք ներքին ուղի մը որ կերկարէր մինչեւ օսմանեան դրամատան ներքեւ : Հայկական ահաւոր դաւադրութեան մը հանգէպ կը գտնուինք մենք :»

Ահա այսպէս է Գոնաքի ոչ պաշտօնական պատմութիւնը :

Առանց կանխաւ կարծիք յայտնելու ետքէն պատահելիքին վրայ, կարելի է հաւատալ որ այս պատմութիւնը անհեթեթ յերկրանք մէ, եւ եթէ մտածենք թէ բոլոր հետազոտութիւնները Սայիտ Պէյ ինքը վարած է, իրաւունք ունինք կարծելու որ բոլոր գործը ոչ թէ յոտից ցզլուի շինծու պատմութիւն մ'է, այլ գրեթէ անհաւատալի կերպով չափազանցուած եւ մեծցուած է իշխանութեանց կողմէն, որոնք ուրախ սրտով տարապայման փոյթ պիտի ցուեն, պղտոր ջուրին մէջ ձուկ պիտի որսան եւ ամէն կողմէն պիտի կլկեն ի վնաս հայերուն :

Շ.

Եւ գոց էր. որոնք որ բաց էին չկըրցան անցնիլ ուտեստովաճառներուն որ իրենց համար սնունդ առնեն. խանութպաններուն վերնայարկերը խտրուարգելք կար կայնիլ . որ մի գուցէ բարձրէն ուռած մը նետուի : Այս վեճակի մէջ ո՛չ մէկ գործակատար չէր կրնար ապահովագրել թէ՛ կուսակալ —մարաշախթին եւ թէ՛ հիւպատոսներուն կեանքն, կառքեր, սպաներ կերթային ու կուգային . բացի խանութներու տակ սպասող զինուորներէն հրապարակները ալ տասնական զինուորով շարժուն ոստիկաններ կային . որոնց մէկը վարէն միւսը վերի կողմէն պտոյտ կը կատարէին. շուկային մէջ մեղմաղճառութիւն կը տիրէր . վաճայն մարդուն որ սխալմամբ խանութէն դուրս ելնէր իսկոյն զինուորներու կողմանէ հրացանի կոծով հարուածներ կստանար :

Մեծ ճամբուն քովերը գտնուած ա. մէն մէկ փողոցին բերանը 4-5 արգելող զինուորներ կային եւ կը հրմըշտըկէին խնդրով ըսելով. «ապուշ կեանքներ, քովի շինք տեղերնիդ կիցէք» . այս վիճակը անեղ մինչեւ Սէլամըքի արարողութիւնը լմիալն եւ Արհեստահանդէսը այցելելով վերադառնալէ յետոյ այլեւս զինուորները տեղերնիք քաղաքիւն փողը հնչեց, արգէն ժամը 4 ու կէսն էր. որով Ա. Պօլսոյ հասարակութիւնը սկսան արձակ, համարձակ իրենց պտոյտները կատարել Տարեդարձի առթիւ Շուկաները բաղճութիւնով լեցուն էին, սակայն միշտ ժողովուրդը սա խօսքերը ծածկ ըսելով «վախ կայ գիւղերը յեղափոխականներու կողմէ վտանգ մը չըլլայ» եւ անոր համար առտուն կանուխէն մինչեւ կէս գիշեր վաշտ մը զինուորներով պաշարելու էր ցուցահանդէսի շէնքը եւ քաղաքը, նաեւ բաւական լրտեսներ եկած էին ուրիշ քաղաքներէ :

Այսպէսով կէս գիշեր մինչեւ ժամը 5ը լաւ ժամանակ անցուցինք, մի քանի ժամ ալ քնանալէ ետք, ահա՛ առաւօտեան զէմ յանկարծ ժամը 8 ու կէսին հրդեհի ձայն մը լսեցինք :

Հրդեհը ծագած է յունաց Մէթրոբոլիտի եւ Թոփ-քարուի մէջ գտնուած հայու տան մը բարձրէն : Տան տէրը Յովհաննէս անուն երկաթագործ (Չորուցի)որ 28 ժամ առաջ եկած ու 80 քիլէ ցորեն տան մէջ տեղաւորելէն յետոյ նորէն գիւղ կերթայ, իր երթալէն օր մը ետքը հրդեհը կըսկիւի, մարդը եղած հետու գիւղէն զինուորով բերել կուտան, պ. Յովհաննէս այս գործին ինչ տեսակ ըլլալէն բնաւ տեղեկութիւն չունի սակայն կը կարծուի թէ չը պիտի կըրնայ իր օձիքը ազատել խեղճ մարդը, որովհետեւ ակաւայ սրցունդներ չատ են ըսելով դիտմամբ ըրաւ պարտքի տակ ընկնուած ըլլալուն : Կրտսէր սկսաւ գիւղերուն ժամը 8 ու կէսին (թրքական) եւ տեղը 15 ու կէս ժամ իր ետին ձգելով քաղաքը մոխիրներու մէջ, եթէ ծոտէն ակաւ նստեա ըլլաւ, մեր պատմական Անի քաղաքը Ա. Պոլսոյ հիմակուան վիճակին քով պալատ է. կրակը սկըսած տեղէն մինչեւ յունաց մեթրոբոլիտը այրեց . շնորհիւ կուսակալին յունաց մայր եկեղեցին առաջնորդարանով եւ դիմացի կիմնաքով ազատուեցաւ, որով թէ՛ վերի կողմերը եւ թէ՛ շուկան Բաշա-քափուով ազատուեցան, վարի կողմէն Տօքթոր Ռուբէն Էֆէնտիի ծօտերը գտնուած տուններուն կէսը ազատուեցաւ, գալով առաջ բոլոր հայու եւ հրէաներու թաղերը մինչեւ Թուհնա գետի եզերքը

գտնուած սալաշները (միջավայր) այրեցաւ. հիմայ այլեւս Բաշ-իչի չկայ, միմիայն տաճկաց թաղերը եւ ետեւի կողմերը մնացին : չեա կրնար տեսնել, ոչ հայոց մայր եկեղեցին (Ս. Թորոս) ո՛չ դպրոցնիս. յունաց Գրիստոս եկեղեցին եւ Բանանիս եկեղեցին. կաթօլիկներու եկեղեցին, Սէնթ Շէլէնի մայրապետաց վարժարանը, Բօլալներու (Պուլկար կաթօլիկ) Հօլոնէս քարուկիր երկրորդական վարժարանը եւ երկու կողմի շէնքերը, իբր հրաշք ցրարոցի ներսի եկեղեցին իր զանգակատունով ազատուած է. Պուլկարաց մեթրաքոլը, մանչերու երկրորդական վարժարանը աղջկանց բանսիօնը, Օրթաքառու գտնուած մատուռնին, ամէնքը այրեցան, նաեւ Հրէից 13 աղօթատեղի (հափա-Սիւնակի) . մինչեւ այսօր չատ մը խանութներ գոց են : Բաւական համազգային անձնք վստուած են, նաեւ զինուոր եւ սպայ, որ մէկը իր հայրը, միւսը աղջիկը, քոյրը, եղբայրը, ապաւնքը կուլայ, սակայն ի գուր : Վնասը կը հաշուի 1-2 միլիոն ոսկիի մօտ. 250, 000 ոսկի ապահովագրութեանը գումարը կը բռնէ, չէնքերու կորուստ վար վեր, 5600ի մօտ է գերիթէ, սակայն տակաւին յայտնի չէ, կը յուսացուի որ բլտատակներու տակ բաւական այրած դիակներ գտնուին, պ. Կարապետ Էնիգլեան, տարիքը առած մարդ մը, կը վնասուի. արդեօք եկեղեցիին մօտ այրեցաւ չի գիտցուիր :

Այլեւս Հայոց խեղճ ազգը բոլորովին կարօտ վիճակի մէջ է, ո՛չ դպրոց ունին, ո՛չ եկեղեցի, միմիայն Ս. Կարապետ (Աթ-Բազար) առաջնուոր հարուստները եւ ունեւորները այսօր աղքատ են դարձեր, սակայն կրնան մէկ կողմէն միսթարիլ իրենք գիրենք ըսելով խանութներնիս չայրեցաւ որով կրնանք մեր աշխատութեամբ վերականգնել :

Ա. Պոլսոյ ժողովուրդը սուգի մէջ է, մէկզմէկու իբր բարեւ անցած ըլլայ կըսեն մինչեւ այսօր . ոմանք ջրեղերեայ բացբըր, ոմանք փողոցները եւ ոմանք արուարձանները պառկեցան :

Հրեաները առաջ կը խնդային, կեանքները թող այրին ըսելով. հրեայէ մը որ սպային մէկը քանի մը թոյլ ջուր ուզած է, իբր պատասխան—«Այսօր չարաթ է, չեմ կրնար գործ ընել, անոնք կեանքուր են, թող այրին, Ռուսիան մեզ ալ չարչարեց անոնք ալ, սակայն հայոց ետքէն թէ՛ եկեղեցիները տուաւ եւ թէ՛ ժողովուրդը ազաւ ձգեց :» Սպան բարկանալով. «հիմայ այս պահուս ազգութիւն չի փնտռուիր, եկուր օգնէ» ըսելով բան մը զարհուլ կը պատրաստուի զլսուն, սա՛կայն աւաղ մեր վատտիրտ հրեան կը փախչի, այն պահուն ալ հրէից թաղերը կրակը առնելով հազու կրնայ տոյգ հրեան իր զաւակները ազատել :

Կառավարութիւնը ուզած տեղերը տղատեց : Սակայն այս գործին մէջ բացէն ի բաց կը տեսնուի կառավարութեան անգործութիւնը եւ վատութիւնը, այլեւս չեմ կարող ոչ մի խօսքով բացատրել, 10-15 տուն այրելէ յետոյ եթէ ուզէին կրնային

Ա. ՊՈԼՍՈՅ ԶՈՐՍ ՕՐՈՒՆՑ ՎԻՃԱԿԸ

«ԻՐԱՆԻՆԻ» յատուկ թղթակցութիւն
ԷՏԻՐՆԷ. 22/4 Օգոստ. Բշ.

Ամսոյն 19/1 ին մեր կայսեր Սուրբան Ապտիւլ Համիտին գահակալութեան տարեդարձի օրը առտուն կանուխ ժամը 10 ին (թրքական) լաւ մը շուկաները ջրեցին . 10 ու կէսին անցուդարձի ճամբաները մինչեւ արհեստահանդէս, որ կատարուեցաւ Սքաւկուլ-եօլու հրէից Թալիւր-թուրա վարժարանի շէնքին մէջ, որ ցուցահանդէսը պիտի տեւէր 3 ամիս :

Տարեդարձի օրը ամսոյն 19/1 տեղւոյն կուսակալ-մարաշախտը Մէհմետ Արիֆ փաշան բոլոր օտար հիւպատոսներուն հետ հոնկէ պիտի անցնէր, այդ ճամբաներուն մէջ, երկու կողմէն իւրաքանչիւր 6-7 քայլին մէջ մէկ զինուորներ հրացանով դրուած էին, մեզ խանութպաններու գուռներուն առջեւ կայնիլ չէին ձգեր, շուկան կէս բաց

առաջը առնել, զինուորները չէնք
մը առաջ պահարկով գերաններով
կը կենային կարծես մարդ կսպա-
սեն որ չփախչի . կրակը առնելուն
պէս ուրիշ տան մը առջեւ կը կե-
նային այդ ձեռքի գերաններով ա-
ռանց փլցունելու տունները :

Ժողովուրդը ունեցած ստակը փո-
խադրութեան համար տուաւ, կա-
ռապանները մէկ ոսկի կուզէին եղած
տեղէն անդին 100 քայլ կառք մը
բեռնոցներու համար. այս ամէնը յը-
մնալէն ետք իրիկուան մօտ զինուո-
րական փոխադրակառքերը եկան
ժողովուրդին ծառայելու, սակայն
այո՛ր կազմակերպ զոյգերնիս իրենց
տունները կամ զօրանոցը կրելով, ո-
մանց տունէն ձերմակեղէնները,
միւսին ստակը եւլնս առնելով. Բո-
լոնացեաց զպրոցէն գզրոց մը կոտ-
րելով բաւականամեծ գումար. ար-
ժեթուղիներ կը գողնան մեր Համիտի
ժրաջան զինուորները :

Տեսակ մը զինուորներ կաշիէ
առպարկներով ջուր կը կրէին հրդե-
հին, խնդաս մի՛ լաս մի՛ . . . Եթէ
մեր համիտական տէրութիւնը ուզէր
միթէ չէ՞ր կրնար հազարներով
զինուոր զրկել, կրակին առաջը
առնել, հէ՛ ախիբ մեծաւոր, ու՛ր
են քու Իրկուսիփերդ, ու՛ր են
մասնագէտներդ. — ուր պրտի ըլլան
թիլաւ ի կաթսայի գլուխը. կամ հը-
պատակներէն ուտելու խմելու կողով-
տելու համար կազմած մասնագէտներ-
րուն մէջ, այլեւս համազգայնու-
թեան աչքին զինուորները մէկ մէկ
հրէջ կը տեսնուէին, այս ամէն
անտեղութիւնով հրդեհը լմնացաւ .
գիշերը փողոցները ոչ զինուոր ոչ
ոտարիկան չես կրնար տեսնալ :

Կիրակի օրը, քանք մեր հայերուն, խնդաս
արգիւք կար թաղերէն ներս մտնել պա-
հապան զինուորները եկեղեցուն արծա-
թեղէնները կը գողնային, ծառայողները որ
հազիւ թոյլտուութիւն ստացած են
անցնել, տեսնելով այս վիճակը կը
բողոքեն մեծերուն, զինուորները հը-
րացանի կոթով հարուածներ կը զննեն
խեղճ եկեղեցիի դռնապաններուն .
տեղւոյն վարդապետին օւ քահանա-
ներուն առջեւ : Անդին Ամբակում-
եաններուն տան մասանին մէջ բաւա-
կան գոյքեր կան եղբւր. զինուորները
երկաթէ դռները կը կոտրեն կը
գողնան, Տէրը գալով կը կղպէ, սա-
կայն ասոր վրայ նորէն կոտրելով
կսկսին գողնալ, տէրը բողոք կընէ
սպային ըսելով թէ կը գողնան. «Տէվ-
լէթին զինուորները գող չեն» կը պա-
տասխանէ . մինչ զինուորները այս
խօսքերու պահուն մտանի դուռ կը
բանային :

Կիրակի գիշեր, Բագանճըլար համամի
ետեւը կրակ առաւ ազատուած հին
լաթերէն որոնք տակաւին կը միան
եղեր, գիշերուան հովէն բոց առ-
նելով վերստին սկնաւ մեծ հրդեհ
մը, սակայն այս անգամ շուտով
առաջը առին :

Այսօր երկուշաբթի բարսուք մը
կայ հրէից բերանը որ 3 պուլկար
եւ 2 հայ վերջինները զինուորական
հազուսաններով յեղափոխականներ,
կրակը տուած են. սակայն բոլորո-
վին սուտ որովհետեւ ազատուած լա-
թերէն է վերջի կրակը, այսօր կարօտ-
եալներուն անունները կը գրուին
որ ճար մը հոգան :

Կէս օրին լուր մը կար թէ ջու-
րերուն մէջ թոյն նետուած է, սա-
կայն 2 ժամ վերջ մունետիկ մը
պոռալով այս լուրը սուտի հանց .
այս խօսքը ըսողը բանտ կը լեցնեն
եւ զրոյցները իրենց քաղաքնե-
րը կը շարունակեն :

Հիմայ ալ կը լսեմ թէ Ալի.բա-
շա շուկային մէջ պ. Յարութիւն
Բիւրքեմանի խանութին կամարը
2 մարդ մտնելու կը լորտեթեամբ ծակ-
ուած է. ասոր վրայ պահապան տը-
նօրէնը ըսած է վալիին Վթէ որ շուկան
այրի դրամատան բանալիները քեզի
կուտամ, որովհետեւ վաճառականնե-
րը հոն են :

Հիմայ զինուորները այն շուկային
կամարներուն վրայ նստած լաւ հրս-
կողութիւն կը կատարեն :

Մովսէս

ՊՈԼԿԱՐԱՅԱՅԵՐՈՒՆ

— 5 —

«ՄԵՆՔ ԻՆՉ ՊԻՏԻ ԸՆՆԵՔ»

Թ. Փազարճըզ 22 օգոստ.

Իսան եւ ութ տարուան երիտա-
սարդ Պուլկարին, ինչպէս կըսեն
ոսմիկները սկսաւ իր «թիգ մը պո-
յէն վեր ապուրներ խառնել» ան ալ
ժամանակէ մը ի վեր սկսած է հե-
տեւի իր աւանդական հօր վաղեմի
քաղաքականութեան — հալածանք օ-
տարներու դէմ :

Բայց Պուլկար ազգի այս ձեռնար-
կը անակնկալ մը չէ մեզի համար :
Ինչպէս կը յիշեն պուլկարահայ ըն-
թերցողներ ասկէ քանի մը տարի
առաջ հանգուցեալ Սթոյլիօֆի նա-
խարարութեան օրով, հեղինակուոր
չըջանակներէ ձայներ լսուեցան թէ
կառավարութիւնը մտադիր է իր երկ-
րին մէջ գանձող բոլոր օտարազգի
վարժարաններու մանուկներուն պար-
տաւորէլ ընել նախ Պուլկար. լեզուն
մինչեւ տղան 12 տարիքը ու երկրոր-
դական տեղը տալ անոր մայրենի
լեզուն : Ասկէ զատ մեր յիշողու-
թեանը մէջ դեռ թարմ է, ամիսներ
առաջ ներկայ նախարարութեան մէկ
որոշումը թէ Պուլկարի մէջ գրու-
նուող հայ վարժարանի ուսուցիչ-
ներ պէտք է պուլկարահայաբան ըլ-
լան . մենք կը կարծէինք թէ կառա-
վարութեան այդ հրամանը մեղի հա-
մար էր միայն եւ արդիւնք այն ձա-
խող գործունէութեան որ տեղի ունե-
ցաւ Ֆիլիպէյի Ազգ. վարժարանի շուր-
ջը. բայց վերջը ստուգուեցաւ թէ
նոյն տնօրինութիւնը փորձած է ընել
նախարարութիւնը Պուլկարի օտար
վարժարաններու համար ալ :

«Բաղձալը կարենալ է» գաւանդ-
ներու համար վտանգը անցած չէ
երբ գործադրութեան չէ գրուած :
Պուլկար ժողովրդի կամքը, մոխի-
րի տակ թաղուեցաւ միայն օր մը
հրդեհը անխուսափելի ընելու համար :
Մեզի պէս չէ ամէն ժողովուրդ մէկ
ոստումով չուզեր իր նպատակին
յառաջդիմել, կապաւէ նպատաւոր
պարագաներու կատարելագոյն յաջո-
ղելու համար. արդէն չորս հինգ ամիս
առաջ տեղւոյս մէջ, ինչպէս կիմա-
նամ, գաղտնի ընկերութիւն մը կազ-
մակերպուել է որուն նպատակը ե-
ղած է թէ Պուլկարներու արդիւրի
օտար խանութպաններէ գնումներ ը-
նել եւ անոնց վաճառականութեան
գիւրութիւններ ընձեռել իբր ծանօթ
կամ արուեստակից : Մէկ խօսքով Պուլ-
կարնե՛ր գուք մեզի համար մեռած էք
ոչ թէ օտարներուն համար ըսել կու-
զեն :

Բայց քննե՛ք թէ պուլկար ժո-
ղովրդին այս կարգի վարժուքը
Պուլկարի մէջ գտնուած ո՛ր օտար
ազգի աւելի փեսակար եղած կըլ-
լար :

Պուլկարացի թիւքը վայրկեան մը
իսկ չպիտի ուզէ մտածել ու դար-
ման մը գտնել իրաց այս վիճակին
նկատելով որ պիտի կրնայ ի հար-
կին հակադրել կառավարութեան այս
տնօրինութեան, եթէ չը յաջողի իսկ,
գիւրին պիտի ըլլայ իրեն պակաս
կապել եւ անցնիլ Տաճկաստան ու
ցրուիլ հայ գաւառները, ինչ որ
Համիտին ուզածն ալ այդ է : Յի-
տոյ կուգան յոյները անոնք ալ ա-
ղէկ գէշ Աթինա մը ունին ետեւ-
նին, գալով հրեայներուն չաճապա-
րենք յոռետես մնալ : Այգ ազգը
գիտէ իր գործը. անոնք ունին իրենց
հանրային այլ եւ այլ կազմակեր-
պութիւնները ունին աշխարհահռչակ
«Ալեմնա» ը որ իրենց մէջ հրաշք-
ներ կը գործէ : «Մենք կըսէր ան-
ցեալ օր հրեայ մը մեր գաւակ-
ներուն այն դատարարակութիւնը
կուտանք օր անոնք իրենց ապ-
րուստը կարենան ձեռք անցնել
քաղաքակիրթ եւ լուսաւորեալ ժո-
ղովուրդի մը մէջ իսկ . Պուլկա-
րի մէջ դատարարակուող մեր գա-
ւակները երբ վերջացնեն իրենց
չըջան մեր վարժարաններու մէջ,
Ալեմնսի միջոցաւ կերթան կը կա-
տարելագործեն իրենց ուսումը եւրո-
պական քաղաք մը. իսկ միայն մեր
վարժարաններուն միջնակարգ դաս-
տիարակութեամբ միացողները կեր-
թան կընդգրկեն այլ եւ այլ պաշ-
տօններ եւրոպայի կարեւոր քաղաք-
ները : 18 երիտասարդներ միայն
ասկէ մնկած են ու ցրուած Աղէք-
սանդրիայի զանազան կողմերը Գա-
հրէի մէջ. տեղեւ խումբ մը հրեայ
ճիւղասարդ պաշտօնեաներ կան եւրո-
պական նշանաւոր տուններու եւ դը-
րասնեակներու մէջ : Ասկէ զատ
հրեայ ազգը հազարաւոր տարիներ-
է ի վեր կը հալածուի . ան վար-
ժուած է բայց վնասած չէ մա-
ծելու միշտ իր օգտին» : Հոս թող
ներուի ինձ ականայ շեղում մը ը
նելու որը աւելի պիտի բացորոշէ
հրեայ ժողովրդին ազդեցիկ գիւրքը
ու գործունէութիւնը :

(Մնացեալը յաջորդով)

ԱԶԳԱՅԻՆ

Մանգուշէի մէջ կը կարգանք
թէ, Պիլէճիկի նախորդ առաջ-
նորդ Տ. Մովսէս եպիսկ. Կէօմ-
րիւքեան՝ որ այժմ անպաշտօն
Պօլիս կը գտնուի, Պուլկարի
պիտի զրկուի իբր Պատր. փոխա-
նորդ :

— Պօլսոյ մէջ երուսաղէմի Պատր.
փոխանորդի պաշտօնը յաճնու-
ած է Տ. Եղիշէ վրդ. Զիլինկիւ-
եանի որ այս շաբթու Պօլիս հա-
սած պիտի ըլլայ :

— Յաւ ի սիրտ կիմանանք թէ
Ամբիկայի առաջնորդ Տ. Յով-
սէփ արք. Ուրաճեան քանրա-
պէս հիւանդացած ըլլալով հի-
ւանդանոցի մէջ կը դարմանուի :

— Ֆիլիպէէ մեզկը գրեն :

Էտիրնէէ եկած նամակները
ամսոյս 19-20 ի հրդեհի մասին
խիստ տխուր կը նկարագրեն
ժողովուրդի կացութիւնը : Հայ,
Յոյն, Հրեայ ազգաբնակչութեանց

երեք չորրորդ մասը անպատգոյ
մնացած, գրեթէ ամէնքն ալ ան-
կարող եղած են ու է բան փախ-
ցնելու անողորմ աղէտքին ճիրան-
ներէն, և անոնք որ մաս մը
բան կարող եղած են փախցնել
իբր ապահով վայր առաջնորդա-
րանի բակը ատոնք ալ հոն տյ-
րած են, թերեւս պատճառ ըլլա-
լով վարժարանին. եկեղեցիին
և առաջնորդարանին ալ հրկիւզ-
մանը : Ի լուր այս դժբաղդու-
թեան հոս հանգանակիլ մասնա-
խումբ մը կազմուեցաւ հայ առ-
եւտրականներէ, եւ որ անմիջա-
պէս գործի ձեռնարկեց : Առա-
ջին օրը միայն հայ շրջանակ-
ներէ 2000 ֆր. հաւաքուեցաւ ու-
րը անմիջապէս պիտի զրկուի.
հանգանակութիւնը դեռ կը շա-
րունակուի : Կիմանանք թէ տի-
կիներն ալ մտադրութիւն ու-
նին եղեր հանգանակութեան
ձեռնարկելու : Բաղձալի է օր
ուրիշ քաղաքներու ազգայինք
ալ նոյնը ընեն :

«Տեղւոյս Հրեաներն ալ հան-
գանակութիւն մը բացած և եր-
կու հազար ֆր. շրջած են արգէն
Աղբիւսնապօլսոյ խախամապե-
տին :

«Տեղւոյս ազգ. վարժարանի
նախորդ տնօրէն Կրօն Միքա-
յէլեան տեղւոյս Պուլկարաց Կիմ-
նազիօնի ֆրանսերէնի ուսուցիչ
նշանակուեցաւ :

«ՀԱՄԼԷԹ»

Այս իրիկուն «Պուլկարի» թատե-
րարանին մէջ ՀԱՄԼԷԹԻ ներկայա-
ցումը տեղի պիտի ունենայ ծանօթ
ողբերգու Տ. Կարապետ Դալֆանի
առաջնորդութեամբ :

Այս երիտասարդ դերասանը՝ օր
ի բոլոր ճիւղ Շէյքսպիրեան տրամ-
ներու հերոսները իր վրայ մարմնա-
ցնելու նուիրած է եւ հայ թատե-
րաբմը նախանձելի բարձրութեան
մը վրայ պահել կը տէրի, արժանի
է թատերասերներու քաջալերու-
թեան :

Le Courrier Europe'en

Յրանսերէն այս շաբթաթիւթը՝ որ կը
գրադի քաղաքակոհ, այժմէական եւ
ընկերվարական խնդիրներով ու գրա-
կանութեամբ. եւ մասնաւոր իրեն
սկզբունք ընտրած է ճշուած ժո-
ղովուրդներու իրաւունքին պաշտ-
պանութիւնը, կը հրատարակուի Թը-
րանսայի ոստանին մէջ գրագէտնե-
րու խմբակի մը վարչութեան տակ
եւ բազմաթիւ աշխատակիցներու մաս-
նակցութեամբ :

Բաժնեգրին է տարեկան 15 ֆր. .
վեցամսեայ 8 ֆր. : Բաժնորդագրուիլ
ուզողը կրնայ իր գտնուած քաղաքի
նամակատան վարչութեան կամ խըմ-
բագրութեան սա հասցէին գրմել :

280 Boulevard Raspail,
(Paris)

Տ Ը Գ Գ Ա Թ

Կազմակերպող հեր չարչարակալ վէ ճու-
մա էրթէսի կիւնիւթի նէշը օլըն-
մազտա օլտըղը կիւնիւ պիւա թէէնիւր բոս-
թանանէյէ թէսլիմ իտիւմէքտէ տիր :
Յազաթ մէսմուրիդէ կէօրէ , քէօյ-
լէքտէ սաթին օլան ապօնէլէրիւկին
պազըսը 10-12 կիւնտէ պիր տէֆա
եաթօս 2-3 նօմէրօյը պիրտէն վէ
կէճ գապուլ իտէրլէր իմիշ :
Բօսթա միւսիւրիյէթի վասիթասը
իւէ պու ուկիւնսըղըղըն էօնիւ-
նիւ ալմազ իշիւն թարաթըմըղտան
մէրճիթնէ միւրաճապթ օլընմը իտէ-
տէ , հանկը օրուշտինալարտա պու ուլ-
կունսըղըղ վուգու պուլտըղ անյա-
մազ լաղըմ կէլիյօր : Շու հալտէ ա-
պօնէլէրիւմիդտէն հէր քիւլէր քի կա-
ղէթալը վաղթընտա ալամայօրլէր ի-
տէ իքի սաթիր մէքթուպլէ սեպտեմ .
15 ինէ գատար պիզէ պիւթիւմէլի
տիրլէր :

Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Թէլէկրաֆլար իքի կիւնտէ պիր,
իզմիրտէ եէնի եէնի պօմպալար
վէ տինամիթ պուլընտըղընը
պիւտիւրիյօրլար : Թէքար իզ-
միրտէն օգոստ. 24 թարիսլի
պիր թէլէկրաֆ իւզրէ, բօլիսիա
1500 քիւլօ (?) տինամիթ վէ պիր
չօգ պօմպալար պուլմուշ, կէօ-
եա պուլար Սթանպօլ իշիւն
հաղըրլանմը ըմըշար :

Թիւրք հիւքիւմէթի իզմիր-
տէքի էրմէնիլէրի էզմէք վէ
զէնկիւնճէ օլանլարը սօյմազ իշիւն
կիւզէլ պիր տէսիսէ պուլմուշ օլ-
տու :

—Պուլկար կաղէթալարըն ին-
պարընա պինտէն, Մաքէթնիւ-
տա թիւրք ասքէրլէրի քէօյլիւ
պուլկարլարա էնվաի զուլուլար
իշլէմէքտէ տիրլէր : Կէօրիւն-
տիլի իւզրէ, իքի սէնէտէն պէ-
րու տէվլէթլէրին թէէսիսինէ
չալըշտըղարը մալիյէ գօնթօ-
լու վէ միւլքիյն աճէնթլէրի վէ
զապթիէ թէշքիւթլարը թիւրք
ասքէրլէրին զատտարլըղարընա
պիր հիւտուտ թային իտէմէ-
տիլէր վէ իտէմէյէճէլէր :

—Էտիրնէտէն սօն պիր թէլէ-
կրօթըն իշարը իւզրէ, եանկը-
նըն խասարաթը 5,000,000 ֆր.
հէսապ օլընըյօր , վէ 50,000
քիւլի էվսիլ վէ մէսքեանսըղ
գալմըշլար :

—Սուլթանըն էօմրիւնէ սուի
գասթ վազասընը նէճիպ Մէլ-
համէ էֆէնտի թահգիգ իթմիշ
օլարազ, ըաթօրթընը ֆրանսըղ-
ճայա թէրճիւմէ իտուպ էլիլիւ-
րէ թէպլիլ իտէճէք տիր : Իշ-
պու խըղմէթէ միւքեաֆաթ օլ-
մազ իւզրէ նէճիպ էֆ. բաշա-
լըղ ըուլպէսինէ մահլար օլ-
մուշ տըր :

Տ Ա Ի Ի Ի Ի

Շուլարտա գուլուգտա իշ-
ճիլէր չալըշմազտա իքէն, չար-
չամպա կիւնիւ սաաթ 10 բատէ-
լէրինտէ՝ նակէհան օճազ երգը-
լուպ իշճիլէր ալթտա գալըրլար :
Տէրհալ ասքէրլէր եէթիշէրէք
երգըլան թաշը վէ գուլու աշար-
լար 8 քիւլի էօլմիւշ վէ 2 քիւլի
եարը ճանա չըգարըրլար :

—Բլէվնանըն Մէթրօթօլ քէօ-
յիւնտէ հարիգ զուհուր իտէրէք,
էվին գատընը տէհշէթլէ գաշ-
տըղը էսնատէ, պիր ալլըղ էվ-
լատընը տալի աթէշտէն գուր-
թարմազ իշիւն կէրի տէօնէր
վէ անը պուլուպ բէնշէրէտէն
տըշարը ալթմայա մուվաֆազ օ-
լուր իտէտէ , քէնտիսինի գուր-
թարմայուպ եանար վէ պու
եօլլա էվլատընըն սէլամէթի ի-
շիւն քէնտի հայաթընը ֆէտա
իթմիշ օլուր :

Բ Ո Ւ Ս Ի Ա

Կոկկասիանըն Շուշի գազա-
սընտա տաղլարտան եանի եալ-
լարտան տէօնէն թաթարլար
վէ Գիւրտլէր էրմէնի քէօյլէրի-
նէ հիւճուլէ հայվանաթ վէ էշ-
եա չալմազտա վէ էնվաի ճինա
յէթլէր իճրա իթմէքտէ օլտըղ-
լարընտան, ճիւլար գասապա վէ
չէհիլլէրին էրմէնիլէրի քէնտի-
լէրինի մուհաֆազա իթմէք ի-
շիւն լաղըմ կէլէն թէտպիլլէրի
էլէ ալմըշլար վէ տիկէր թարաֆ-
տան թիֆլիսէ թէլէկրաֆլար
վէրուպ , ասայիշին մուհաֆազա-
սը իշիւն հիւքիւմէթին մուա-
վէնէթիւնի իսթիւրհամ իթմիշլէր
տիր :

Գազալարտա օլտըղը կիպի
Շուշի շէհրինէ տալի իւր հիւ-
ճուլ իտէնիլէր թիւրքլէր օլտը-
ղը օգոստ. 17 թարիսլի Մշակ
կաղէթասընա վէրիլէն աթիտէ-
քի թէլէկրաֆլէ թաստիգ օլը-
նըյօր :

« Թիւրքլէր էօյլէնտէ էրմէ-
նիլէր իւզէրինէ հիւճուլ իտուպ
պիր քիւլի էօլտիւրմիւշ վէ իքի
քիւլի եարէլէտիքտէն սօնրա
սիւհալարընը ալմըշլար ըտը :
Պուլըն իւզէրինէ իքի թարաֆ-
տան աթէշէ պաշալարլար էր-
մէնիլէր թիւրքլէրի շէհրին պի-
րինճի գըմընտան կէրէ սիւր-
տիւլէր : Էրմէնիլէրտէն վէ
թիւրքլէրտէն 15 քիւլի էօլտիւ-
լէր : Սաաթ սէքիլ պուլուգտա
աթէշ քէսիլտի : »

Պու սուրէթտէ իսլամլարտան
պաշլանմը օլան վահշիլիք շիմ-
տիյէ գատար տէվամ իթմէքտէ
օլտըղը աթիտէքի եէնի թէլէ-
կրաֆլարլէ թէպէյիւն օլիյօր :

Էլիզաբէթօթօլ 24 օգոստ.—Շու-
շի շէհրին եարըսը աթէշ իշին-
տէ տիր : Շուշի ճիւլարընտա
գըրկըն տէվամ իթմէքտէ տիր :

Էրմէնիլէր էսկի գալէի զապթ
իթմիշլէր : Գօճալի սթասիօնը
եազընլարընտա աղըր վա-
գաալար օլմուշ տըր :

—Պագու 23 օգոստոս — Այըն
20 սինտէ էրմէնիլէր վէ թա-
թարլար պէյնիւնտէ միւսատէմէ-
լէր վուգու պուլտու իքի թա-
րաֆտան 100 քիւլի էօլիւ վէ եա-
րէլի վար տըր : Բրէնս նիշէրաղ-
տէ տալի եարէլէնմիշ տիր :
Թաթարլար ասքէրլէր իւզէրինէ
տալի հիւճուլ իթմիլէր վէ կէ-
րի սիւրիւտիլէր :

—Թիֆլիս 24 օգոստ.—Կոկկա-
սիանըն պիւթիւն շիմալի գը-
թասընտա թաթարլարտան գօր-
գուլմազտա տըր : Շուշիտէ վէ
Պագուտա պէօյիւկ գըրկընլար
օլմուշ տըր :

Բէթերսպուրկ 24 օգոստ.—
Պէրթ. Վաթուսիսինի պիւտիւրի-
կինէպինտէն, Կոկկասիտա եանկըն
սէօյիւնմիւշ տիր. 500 ատէտ կազ
բուսարլարը պօլուլմուշ տըրլար :
Իմտատա կիտէն ասքէրլէր եան-
կընըն ճէսամէթիւնտէն նաշի կէրի
չէքիւլէկէ մէճպուր օլմուշլար :
Պօզուլան մահշէլլէրին վէ ֆապրի-
գալարըն խասարաթը բէք չօգ
օլմաղլէ, օնլարը էվլէլէր հալի-
նէ կէթիւրմէք իշիւն չօգ վա-
գըթ վէ չօգ մէսարիֆ լաղըմ օ-
լաճազ :

—Աճէմ շահը Էվրոքատան ալ-
տէթի միւնասիպէթլէ Բէթէրս-
պուրկա կիթմիշ օլտըղընտան ,
Չար Բէթէրհօվ սէրալընտա Շա-
հը զիյաֆէթէ տալէթ իթմիշ վէ
պու վասիթա իւէ իքի հիւքիւմ-
տարլար լաթիֆ քէլամլար միւ-
պատէլէ իթմիշլէր վէ սամիմի
տօսթլուգ պէյան էլլէմիշլէր տիր :

—Գիշնէվտէ թէքար գարը-
շըղըրգ զուհուրա կէլմիշ տիր :
Պիր ֆագիր գատընըն էօլիսիւ
մէզարլըղա կէօթիւրիւր իքէն
էհալի վէ ասքէրլէր պէյնիւնտէ
գալկա վուգու պուլմուշ. 50 քի-
ւի տէրտէսթ օլընմըշ. Եահուտի
խաթթանանի գօրտօն ալթընա
ալընմըշ քէզա շէհրին էհէմի
յէթիւ նօգթալարը ասքէրլէր-
տէն իշլալ օլընմըշ :

Ռ Ո Ւ Ս — Ճ Ա Ռ Ո Ն

Մ Ի Ի Ս Ա Լ Է Հ Ա

Սուլհ մուգավէլէնամէսի օգոս-
տոս 23 տէ Մ. Գօմուրա վէ Մ.
Վիթէ թարաֆընտան ազշամ
սաաթ 4 տէ իմզալանտը : Մէճ-
լիս խիթմընտա ճաթօն մու-
րախալարը սամիմի սուրէթտէ
րուս մուրախալարըն էլլէրինի
սըղուպ վէտալաշարազ չէքիւլուպ
օթէլլէրինէ կիթմիշլէր եօլա
հաղըրլանմազ իշիւն : Բուսլար
տալի մէճլիս մահշէլլանտէն տօղ-
րու քիլիսէյէ կիթմիշլէր տիր :
—Միւսալէհա շարթլարը ճա-

թօն էհալիսինի մէճուլն իտէ-
մէսիլէր : Պու սէպէպլէ Թօ-
քիօտա իթթիլալ զուհուր իթմիշ
տիր : Էհալի Գօքուսիմ նամ կա-
ղէթանըն իտարէխանէսինէ հիւ-
ճուլէ անը պօզմուշ, Հիւքիւմէթ
չօգ քիշիլէրի տէրտէսթ իթմիշ
տիր :

—Ճաթօնլար Մանչուրիանըն
շիմալի գըթասընա հիճրէթ
իթմէքտէ օլուպ, շէհրիլէր ճա-
րոնլըլար իլէ տօլմազտա վէ պէօ-
յիւկ թիւճարլար Մանչուրիատա
շիւպէլէր թէէսիս իթմէքտէ
տիրլէր :

—Թօքիօտա ճաթօն մէքթէպ-
լէրինտէ 2716 չինլի շակիրտլէր
օգուլմազտա օլտըղտան մաստա,
5,500 չինլիլէր տալի 2ին տա-
լիլինտէ ճաթօնա էօյրէնմէքտէ
ըմըշլար : վէ տահա չօգ չինլի-
լէր ճաթօն մէքթէպլէրինէ կիր-
մէկէ արզուքէշ օլտըղլարընտան
ճաթօն տէվլէթի պիր չօգ եէնի
մէքթէպլէր աշմայա մէճպուր
օլմուշ տըր :

Պու վէ տահա պաշգա թէտ-
պիրլէրլէ թէպէյիւն օլընըյօր
քի՝ ճաթօն 2ինլիլէրի եէնի ու-
սուլ իւզրէ մէտէնիլէթ սօգ-
մազ զայրէթիւնտէ օլուպ, իլէրի-
սի իշիւն հէմճըն 2ինլիլէր իլէ
պիրլէշուպ Էվրոքալա գարը
ճէսիմ պիր գուլէթ թէտարիգ
իթմէք էֆքեարընտա պուլը-
նըյօր :

« Ի Ր Ա Ի Ո Ի Ն Ք » Ի պատասխանները

- Լ Ո Ւ Ն Գ Օ Վ Ի Թ Ա. Թ. Ժամկոչ — Ստա-
ցանք 14 ֆր.բ
- Գ Ա Ռ Ա Մ Ե Ս Մ Ի Ր Ա. Ղազարեան — Ստա-
ցանք 21 ֆր.բ
- Բ Լ Օ Է Շ Դ. Եղբ. Յովնանէսեան — Ստա-
ցանք 16 ֆր.բ
- Պ Ա Պ Ա Ս Ա Ղ Տ. Ա. Գ. — Ստացանք 6 ֆր.բ
- Կ Ե Օ Լ Լ Է Ր գրւղ Ս. Զաքար — 8 ֆր.բ
- սեզ զրկեցէք :

Կ Լ Փ Ն Տ Ո Ւ Ի Ի

Բաղէշի Խուլթիլ գիւղացի Յակոբ
Մ. Էրօսան (Ումուր մականուննալ)
35-37 տարեկան կարճահասակ զեղնա-
գոյն եւ կապուտաշիւայ անձը Պանգ
Օթօմանի գէպթին ուսու դեսպանատան
պաշտօնէի մը հետ Պուլսէն կրէտէ մեկ-
նած եւ յետոյ հոնկէ Բեդրեսպուրկ
երթալով , բոլորովին զաղրեցուցած
է իր յարաբերութիւնը իր ընտանի-
քին ու ազգականներուն հետ ,
իմացուած է թէ Ռուսմանիս անցած
է վերջերս : Ուստի կը խնդրուի իր
հասցէն գիտցողներէ որ հաճին երկտո-
ղով մը իմացնել խմբագրութեանս :

Одговорили А. Курбетиянъ
печатица Д. орошъ и С.не—Варна

